ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 244-Ա13 «28» 11 2024թ.

## «ԵՐՎԱՆԴ ՍԱՐԳՍՅԱՆ ՌՈՒԴՈԼՖԻ» Ա/Ձ-ԻՆ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «**ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/96**» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 14-ի որոշումը առ այն, որ «Երվանդ Սարգսյան Ռուդոլֆի» Ա/Ձ-ի կողմից 8-րդ և 15-րդ չափաբաժինների համար ներկայացված հայտում եղել են անհամապատասխանություններ (տնօրենի կողմից տրված լիազորագիրը արտատպված չի եղել բնօրինակից, տնօրենի ստորագրությունը եղել է նկար, ինչպես նաև բացակայել է առաջարկվող ապրանքների նկարագրության դաշտում նշված՝ կից ներկայացվող նմուշ-նկարները), որոնք շտկման համար տրված ժամանակահատվածի ավարտից հետո մասնակցի կողմից չեն շտկվել (ներկայացված լիազորագրի նոր տարբերակը ստորագրված չի եղել տնօրենի կողմից) և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2–րդ մասով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

«Երվանդ Սարգսյան Ռուդոլֆի» Ա/Ձ-ին (ՀՎՀՀ՝ 73017226, գործունեության հասցեն՝ ք Երևան Դավթաշեն 1 թղմ. 29շ.,47 բն.) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

X

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Հ. ՀԱԿՈԲՅԱՆ**